ԿԱՐԾԻՔ

Անի Համլետի Գալստյանի «Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Արժութային փոխարժեքի կարգավորման ռեժիմի ընտրությունը միջազգային տնտեսագիտության մեջ շարունակական քննարկման առարկա է: Ընդորում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հարցը բարդ և ոչ միանշանակ մեկնաբանվողներից է, դիտարկվող յուրաքանչյուր երկրում, տնտեսության զարգացման յուրաքանչյուր փուլում ու կոնկրետ տնտեսական իրավիճակում պահանջում է անհատական մոտեցում:

Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության տեսանկյունից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի թեև կարճատև սակայն բավականին հագեցված փորձը: Նախ զարգացող տնտեսությամբ երկրներում, որոնք Հայաստանի նման բնութագրվում են տնտեսության մեջ առկա խոր ճեղքվածքներով՝ արտաքին առևտուր, բյուջե և որոնք ներառված չեն միջազգային շուկաներում, լողացող փոխարժեքի քաղաքականությունը այլընտրանք չունի: Փաստորեն, ազգային արժույթը շրջանառության մեջ դնելուց մի քանի շաբաթ հետո անցում կատարվեց լողացող փոխարժեքի քաղաքականությանը, որն արտարժութային պաշարների բացակայության պայմաններում կարելի է բնութագրել իբրև ազատ և միայն հետագայում ձևավորվեց շուկային միջամտելու փորձը: Ընդորում խնդիրն այն է, որ ԿԲ միջամտությունները արժութային շուկայում միշտ չեն համոզիչ եղել՝ օրինակ 2008-2009-ներին, երբ ՀՀ ԿԲ-ն, ըստ իս, ենթարկվեց քաղաքական ճնշումների, ստեղծված քաղաքական իրավիճակում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում սոցիալական հետևանքները մեղմելու, ինչպես նաև պարլամենտական մեծամասնության պահանջներին տուրք տալով (այդ շրջանում ՀՀ ԱԺ-ում հավաքագրված էր ՀՀ-ում

ներմուծմամբ զբաղվող գործարարների մեծ մասը) գնաց աննախադեպ ինտերվենցիաների:

Ինչևէ, նշված փորձը ևս ուսանելի է հետագայում էական շեղումներից խուսափելու համար, իսկ դրա բազմակողմանի և անաչառ ուսումնասիրությունը հիմք պետք է հանդիսանա հուսալի տնտեսական քաղաքականության կառուցման համար: Խնդրի արդիականությունը պայմանավորված է ձևավորվող նոր իրավիճակով, երբ ՀՀ-ն անդամակցելով ԵԱՏՄ-ին, ենթարկվում է նոր բնույթի տնտեսական ռիսկերի, այդ թվում անդամ երկրներում իրականացվող արժույթային քաղաքականությունների պատճառով: Լայն իմաստով ՀՀ-ում արժութային քաղաքականությունը գործող կարգավորումների պայմաններում, ըստ էության, իրենից ներկայացնում է դրամավարկային քաղաքականության գործիք և դրա կիրառումը առկա կարգավորումների պարագայում պետք է նպատակաուղղվի ԿԲ նպատակների իրագործմանը, այսինքն ատենախոսության մեջ դրված նպատակների իրագործման առումով կարևոր է դառնում նաև խնդրի ինստիտուցիոնալ կողմերի, այդ թվում առկա կարգավորումների պարագայում պատկան մարմինների իրավասությունների ու լիազորությունների քննարկումը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է արժութային կարգավորման ռեժիմի ընտրությունը Հայաստանի Հանրապետությունում՝ արտահանման ներուժի և տնտեսական աճի կայուն ու երկարաժամկետ տեմպերի խթանման համատեքստում:

Դրված նպատակին հասնելու համար աշխատանքում կարևորվել են հետևյալ խնդիրները.

✓ բացահայտել զարգացող տնտեսություն ունեցող երկրներում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները և տեսական մոտեցումները,

✓ բացահայտել տնտեսական միության շրջանակներում արժութային ինտեգրման հիմնական չափանիշները,

✓ բացահայտել արտահանման ներուժի վրա արժութային կարգավորման ռեժիմի ազդեցության տեսական և էմպիրիկ մոտեցումները,

✓ բացահայտել և վերլուծել տնտեսական աճի և արժութային փոխարժեքի կարգավորման փոխազդեցության տեսական և գործնական մոտեցումները,

✓ վերլուծել ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող արժութային կարգավորման ռեժիմը և բացահայտել դրա ընտրության հիմնախնդիրները Հայաստանում,

✓ բացահայտել արժութային փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնները Հայաստանում և գնահատել դրանց ազդեցությունը տնտեսաչափական մոդելի կիրառմամբ,

✓ գնահատել ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունները,

✓ վերլուծել Հայաստանի արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի տատանողականության ազդեցությունը ԵԱՏՄ-ին անդամակցության պայմաններում,

✓ բացահայտել և գնահատել Հայաստանի տնտեսական աճի վրա արժութային կարգավորման ռեժիմի ազդեցության ուղիները,

✓ մշակել Հայաստանում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության մոտեցում՝ արտահանման ներուժի և տնտեսական աճի խթանման տեսանկյունից:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտն է ՀՀ արժութային համակարգը, իսկ հետազոտության առարկան է արժութային կարգավորման ռեժիմի արդիականացումը Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ անդամակցության պայմաններում:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

1. Գնահատվել են ՀՀ դրամի փոխարժեքի ձևավորման էկզոգեն և էնդոգեն հիմնական գործոնները վեկտորային ավտոռեգրեսիոն (VAR) մոդելի կիրառմամբ և բացահայտվել են արժութային կարգավորման ոչ շուկայական տարրերը:
2. Գնահատվել է ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող արժութային կարգավորման ռեժիմի ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա՝ տնտեսական աճի կայուն և երկարաժամկետ տեմպերի խթանման (ապախթանման) տեսանկյունից, տնտեսաչափական մոդելների կիրառմամբ:
3. Մշակվել է Հայաստանի Հանրապետության արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի փոխարժեքի տատանողականության ազդեցության գնահատման մոտեցում:
4. Գնահատվել է մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների հնարավոր ազդեցությունը ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունների վրա:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները զարգացող երկրներում և տնտեսական միության շրջանակներում»**, գլխում ներկայացվել են զարգացող երկրներում և տնտեսական միության շրջանակներում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության տեսական հիմքերը և միջազգային փորձը: Վերլուծվել են արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները, ինչպես նաև արժութային կարգավորման տարբեր ռեժիմների ազդեցությունը տնտեսական աճի և արտահանման ներուժի վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արժութային կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում և ԵԱՏՄ շրջանակներում»**, գլուխը նվիրված է Հայաստանում

արժութային կարգավորման հիմնախնդիրների հայտնաբերմանը, ՀՀ դրամի ձևավորման հիմնական էկզոգեն և էնդոգեն գործոնների բացահայտմանն ու գնահատմանը, ինչպես նաև ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունների գնահատմանը: Հեղինակի կողմից կառուցվել է ՀՀ դրամի ձևավորման հիմնական գործոնների գնահատման տնտեսաչափական մոդելը:

Ատենախոսության երրորդ՝ **«Արժութային փոխարժեքի ազդեցությունը արտահանման ներուժի և տնտեսական աճի վրա Հայաստանի Հանրապետությունում»**, գլխում վերլուծվել է Հայաստանի արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի ազդեցությունը հայրենական ապրանքների արտաքին գնային մրցունակության միջոցով, ինչպես նաև բացահայտվել են տնտեսական աճի վրա ՀՀ դրամի ազդեցության ուղիները: Կառուցվել է տնտեսական աճի վրա ՀՀ դրամի ազդեցության մոդելը և մշակվել են երկու սցենարներ:

Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Անշուշտ կատարված է բավականին ծավալուն աշխատանք, հետաքրքիր հետազոտություն, որը թվարկված առավելությունների հետ մեկտեղ զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Նախ նշեմ, որ հետազոտությունը շատ ընգրկուն է, որոշ հարցեր քննարկելիս հեղինակը ուսումնասիրում է նյութեր, որոնք ուղղակի չեն բխում խնդրո առարկա հարցի բուն տրամաբանությունից, անգամ որոշ իմաստով շեղվում են հետազոտության առանցքային տրամաբանությունից: Օր. միայն աշխատանքի երկրորդ գլխի՝ Արժութային կարգավորումը ԵԱՏՄ շրջանակներում հատվածում 19-ը էջանոց շարադրանքում ներկայացված է 25 գծապատկեր և աղյուսակ, որոնցում ներկայացված է համապատասխան տեղեկատվություն կամ վերլուծական նյութ կից մեկնաբանություններով: Ընդորում ի թիվս այլ խնդիրների անդրադարձ է կատարվում, օրինակ՝ ԵԱՏՄ անդամ երկրներում 1962-2017թթ-ին

զուտ միգրացիային, կամ 2000թ-ին նշված երկրներից բարձրագույն կրթությամբ մարդկանց էմիգրացիային:

2. Աշխատանքում տեղ են գտել որոշ պնդումներ, որոնք պետք է հանդիսանային հետազոտության արդյունք, մինչդեռ ընդունվել են, ինչպես նշում է հեղինակը, իբրև ուսումնասիրության հիմնական վարկած: Նախ ներածության մեջ հեղինակը նշում է՝ «Դիտարկելով դրամավարկային և արժութային կարգավորման փորձը Հայաստանում՝ կարելի է պնդել, որ այն չի նպաստել բնակչության բարեկեցության բարելավմանն ու տնտեսական աճի խթանմանը:» էջ 5, կամ էջ 26՝ «Շատ դեպքերում դրամավարկային քաղաքականության անկախությունը, որը տալիս է լողացող փոխարժեքը, պարզապես հանգեցրել է քրոնիկ գնաճի», կամ՝ «Սույն հետազոտության հիմնական վարկածն է, որ Հայաստանում իրականացվող արժութային քաղաքականությունը բերել է տնտեսական աճի ներուժի զգալի բացասական հետևանքների» էջ 110: Մինչդեռ, մասնավորապես, բնակչության բարեկեցության հետ կապված որևէ խնդիր աշխատանքում չի քննարկվել, իսկ քրոնիկ ասված գնաճ Հայաստանում ընդհանրապես չի դիտարկվել, անգամ հակառակը՝ Հայաստանը վերջին 25 տարում բնութագրվել է ցածր, շատ ժամանակ անգամ ծրագրավորվածից ցածր գնաճով, ինչը, իհարկե չի նպաստել տնտեսական աճին:

3. Արդեն առիթ ունեցել եմ հայտնել կարծիքս Հայաստանում իրականացվող արժութային քաղաքականության արդյունավետության վերաբերյալ, հավելեմ միայն, որ աշխատանքում հեղինակը անդրադառնում է առավելապես փոխարժեքի քաղաքականությանը, մինչդեռ արժութային կարգավորման այլ, մասնավորապես ինստիտունցիոնալ կողմերին, մասնավորապես առկա իրավական կարգավորումներին, ընդհանրապես անդրադարձ չկա:

4. Այս տեսանկյունից պետք է նշել, որ աշխատանքը էապես կշահեր, եթե ատենախոսության երկրորդ՝ «Արժութային կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում և ԵԱՏՄ շրջանակներում» գլխում հեղինակը անդրադառնար նաև անդամ երկրներում առկա արժութային կարգավորումների

վերաբերյալ օրենսդրությանը, այդ թվում արժութային քաղաքականության համար պատասխանատու մարմնի (մարմինների) իրավասություններին ու նպատակներին, մինչդեռ հեղինակը հիմնական ուշադրությունը նվիրում է այդ երկրների արժութային փոխարժեքների վերլուծությանը:

5. Ներկայացված եզրակացություններում, որոշ դեպքերում արվում են հարցադրումներ, որոնք ավելի խոր վերլուծության կարիք ունեն կամ չեն բխում հետազոտության բուն նպատակիներից: Օրինակ, եզրակացությունների 6-րդ կետում հեղինակը անդրադառնում է պարտադիր պահուստավորման հարցին և առանց խնդրի քիչ թե շատ խոր ուսումնասիրության, հանդես է գալիս տվյալ գործիքից հրաժարվելու հարցադրումով: Կամ, 10-րդ կետում հեղինակը հանդես է գալիս պնդմամբ, որ 1991-1992թթ-ին Հայաստանում ՀՆԱ-ի անկումը կազմել է 78.5%՝ կրկնապատիկ ավել, քան արձանագրված էր վիճակագրական տվյալներով: Նախ նշեմ, որ նման հայտարարությունը բնավ էլ չի բխում հետազոտության նպատակներից, բացի այդ այն լուրջ ուսումնասիրության կարիք ունի, ինչը ատենախոսության մեջ բացակայում էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով շարադրվածը, կարելի է հավաստել, որ կատարված է ավարտուն, բավականին հետաքրքիր, նոր մոտեցումներով ու հարցադրումներով հագեցած, բավականին ուշագրավ հետազոտություն: Հեղինակը, դատելով աշխատանքում արված մեծաքանակ մեջբերումներից, աշխատանքը կառուցել է տվյալ բնագավառի հետազոտությունների բավականին խոր ուսումնասիրության վրա, ինչը հանդիսանում է աշխատանքի տեսական ակնհայտ արժանիքներից: Բացի այդ աշխատանքը կարող է ունենալ նաև գործնական նշանակություն և կիրառվել համապատասխան քաղաքականությունները մշակելիս:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Ա.Հ.Գալստյանի «Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը

համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանի շնորհման կանոնակարգին և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ «Ը.00.03 Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Բ.Ա. Ասատրյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Բ. Ա. Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական բարձրագույն խորհրդի գիտ. թեկնածու

Լևոն Հովսեփյան

14 սեպտեմբերի 2020թ.